338.14
Ξ-99

[1938]

14 JUN 2013

17 FEB 2010

338.14
Հ-99
10718
0123519

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԽՍՀ Միության հողագործության ժողկոմատի № 1048 հրամանով, 3 օգոստոսի 1938 թվ.

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻԱՐՈՒԻԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՑԵՎ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

I. ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Կոլտնտեսային ձիաբուծական ապրանքային ֆերմայում (ՁԱՖ-ում) բոլոր աշխատանքները կատարելու համար կոլտնտեսության վարչությունը կոլտնտեսության անդամներից կազմում է ձիապանների և յերամակավարների մշտական ձիաբուծական բրիգադ 3 տարուց վոչ պակաս ժամանակով։

Ձիերի ախոռային պահպանման պայմաններում, մոտավորապես յուրաքանչյուր 25 մոր համար իր սերնդով, առանձին բրիգադներ են կազմակերպվում։

Ցերամակային պահպանման պայմաններում առանձին բրիգադներ կազմակերպվում են յուրաքանչյուր 100 մոր համար իր սերնդով։

2. ՁԱՖ չունեցող կոլտնտեսություններում, արտադրական բրիգադներից հատուկ խմբի մեջ առանձնացված մատղաշ ձիերին, արտադրող հովատակներին ու «ԲԴԿԲ ձի» ֆոնդի ձիերին սպասարկելու համար ձիաբուծական բրիգադ է կազմվում։ ՁԱՖ ունեցող կոլտնտեսություններում «ԲԴԿԲ ձի» ֆոնդի ձիերը, արտադրող հովատակները և նույնպես մատղաշները արտադրական բրիգադներից հանձնվում են ՁԱՖ-ին։

ՁԱՖ-ի կամ ձիաբուծական բրիգադի աշխատանքը ղեկա-

ЗУНБ АН УССР
БІБЛІОТЕКА Академії Наук УРСР

30675

վարելու համար կոլտնտեսության վարչությունը, կոլտնտեսականների ընդհանուր ժողովի հաստատությամբ, լավագույն կոլտնտեսականներից, վորոնք լավ գիտեն ձին, նշանակում է ՁԱՖ-ի վարիչ կամ ձիաբուծական բրիգադի բրիգադավար 2 տարուց վոչ պակաս ժամանակով։

Մինչև 100 ձի (բոլոր տարիքների) ունեցող կոլտնտեսություններում ՁԱՖ-ի վարիչը կամ ձիաբուծական բրիգադի բրիգադավարն անմիջական արտադրական աշխատանքից չի ազատվում և վորպես կանոն՝ սպասարկում է արտադրող հովատակներին։ Այդ դեպքում ՁԱՖ-ի վարիչը վարձատրվում է նույնպես սույն հրահանգի 23-րդ կետի համաձայն։

ՁԱՖ-ի վարիչի կամ բրիգադավարի բեռնվածության չափը սահմանվում է կոլտնտեսության վարչության կողմից։

100 ից ավելի ձի ունեցող կոլտնտեսություններում ՁԱՖ-ի վարիչը կամ ձիաբուծական բրիգադի բրիգադավարն ազատվում է ձիերին խնամելու աշխատանքից։

4. Կոլտնտեսության բոլոր բանող ձիերը ամրացվում են արտադրական (դաշտավարական և անասնապահական) բրիգադներին։

Բրիգադի ներսում կոլտնտեսության բանող ձիերը, աշխատանքի մեջ ոգտագործելու համար ամրացվում են նրանց աշխատեցնող կոլտնտեսականներին, վորոնք պատասխանատու են նրանց ամրացված ձիերի առողջության վիճակին ու գիրությանը, զամբիկների նախազգուշացումները — վիժումներից, ծծկեր մարուկների պահպանմանը և նույնպես ձիերի ինվենտարի ու ձիասարքի պահպանմանը։

Արտադրական բրիգադի բանող ձիերին խնամելու համար բրիգադավարը տվյալ բրիգադի լավագույն կոլտնտեսականներից ձիապաններ է նշանակում։

5. Ախոռում ամենօրյա աշխատանքը ղեկավարելու համար արտադրական բրիգադի բրիգադավարը տվյալ ձիապան է նշանակում, վորը ձիերին խնամելու անմիջական արտադրական աշխատանքը կատարելուց չի ազատվում։

6. Ձիերի ախոռային պահպանման ժամանակ, ինչպես ՁԱՖ-ում, նույնպես և արտադրական բրիգադներում ոժանդակ աշխատանքների կատարումը, կերի ու ցամքարի մոտեցնելն ախոռին և նույնպես աղբի դուրս տանելն ախոռից — դրվում է հատուկ առանձնացված կոլտնտեսականների վրա։

7. ՁԱՖ-ի և յուրաքանչյուր առանձին արտադրական ու ձիաբուծական բրիգադին ամրացվում են ախոռային ու ֆուրաժային շենքերը, նույնպես և տարեկան պահանջի սահմաններում՝ կերերը։

8. Անասնաբուծության զարգացման պետական պլանի հաստատումը, կոլտնտեսության վարչությունն ըստ յուրաքանչյուր բրիգադի, ձիագլխի զարգացման, զուգավորման, ծնի և մտրուկների աճեցման վերաբերյալ արտադրական առաջադրանք է սահմանում։

II. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. ՁԱՖ-ի վարիչը կամ ձիաբուծական բրիգադի բրիգադավարը պատասխանատու է կոլտնտեսության վարչության առաջ.

ա). Ձիաբուծության վերաբերյալ արտադրական առաջադրանքներն իր ժամանակին կատարելու համար.

բ). ՁԱՖ-ի կամ բրիգադի ձիագլխի կանոնավոր խնամքը, պահպանումը և կերակրումը կազմակերպելու համար.

գ). արտադրության մեջ ձիապահներին դասավորելու և նրանց աշխատանքը ղեկավարելու համար.

դ) անասնաբուժա-սանիտարական միջոցառումներն անցկացնելու համար.

ե). ՁԱՖ-ին կամ բրիգադին ամրացրած ախոռները և շենքերը կանոնավոր վիճակում պահպանելու համար.

զ). տոհմային ձիեր ունեցող կոլտնտեսություններում մարդակայան (տրենինգ) կազմակերպելու համար։

Ձիերի ցերամակային պահպանումով զբաղվող կոլտնտեսություններում, ՁԱՖ-ի վարիչը կամ ձիաբուծական բրիգադի բրիգադավարը, բացի դրանից պատասխանատու է արոտային տնտեսության կազմակերպման ու ոգտագործման համար։

ՁԱՖ-ի վարիչ վրա դրվում է ՁԱՖ-ը ձիակազմով կոմպլեկտավորելու պարտականություններ։

ՁԱՖ-ի վարիչի կամ ձիաբուծական բրիգադի բրիգադավարի տրվելիք ցուցումները՝ արտադրական բրիգադների բրի-

գաղավարներին, ձիերին աշխատեցնող ձիապահներին և կոլտնտեսականներին՝ ձիերի վերարտադրման, հղի զամբիկների վիժումներից պահպանելու վերաբերյալ պարտադիր են կատարման համար։

10. Կոլտնտեսության արտադրական բրիգադի բրիգադիրը կոլտնտեսության վարչության առաջ պատասխանատու է.

ա). բրիգադի ձիերի վիճակի, գիրության, աշխատունակության, զամբիկների հղիության պահպանման, նրանց իր ժամանակին աշխատանքից ազատելու, ծնելուց յիրկու ամիս առաջ և ծնելուց 15 օր հետո բոլոր տեսակի աշխատանքներից բոլորովին ազատելու, նույնպես և զամբիկներին իր ժամանակին զուգավորման կայան տանելու համար.

բ). ձիերին վորոշ ձիապահներին ու ձիավարներին ամրացնելու համար.

գ). կոլտնտեսության վարչությունից իր ժամանակին կերերն ստանալու, խնամքով պահելու և ծախսելու համար.

դ). բրիգադին ամրացրած ախոռները և շենքերը լավ դրության մեջ պահպանելու համար.

ե). ձիերի ինվենտարի և ձիասարքի վիճակի համար։

11. Արտադրական բրիգադի աշխատանքն ախոռում ղեկավարում է ավագ ձիապահը։ Ավագ ձիապահի պարտականությունների մեջ մտնում է՝

ա). նրա համար սահմանված նորմայի համաձայն ձիերի սպասարկումը.

բ). ձիապահների աշխատանքի ղեկավարումը.

գ). զուգավորման կամպանիայի, զամբիկների ծնի անցկացումը և մտրուկների զատումը մայրերից.

դ). կերերն ու ցամքարն իր ժամանակին ախոռին մոտեցնելը, այդպիսիների պահելը և ծախսելը սահմանված նորմաների համաձայն.

ե). ձիերի համար ձիասարքի ընտրությունը և այդպիսիների պահումը.

զ). ձիերին աշխատանքի ուղարկելն ու հետ ընդունելը։ Ձիերի բացահայտ հիվանդագին դրության դեպքում (հարուստներ, նամինկաներ, կաղումներ, տարբեր տեսակի ֆլասվածքներ, հյուծվածություն և այլն), ավագ ձիապահին իրավունք է վերապահվում նման ձիերին աշխատանքի չուղարկելու, իրազեկ պահելով այդ մասին արտադրական բրիգադի բրիգադիրին և անասնաբուժական աշխատողին.

է). հսկողությունը սահմանված ներքին կարգ ու կանոնի կիրառման վրա։

Ձիերի յերամակային պահպանման ժամանակ, յերամակավարների աշխատանքը ղեկավարում է ՁԱՖ-ի վարիչի կողմից նշանակվելիք ավագ յերամակավարը, վորը կազմակերպում է յերամակի արածացնելը, ձիերին իր ժամանակին ջրելը, կազմակերպում է արոտների կանոնավոր ոգտագործումը, ձիերի թագցնումը բքից, ձիերի լրացուցիչ կերակրումը, տանում է յերամակի ձիազլխի հաշվառումը, գրանցում է զուգավորման, ծնի ժամկետները և նորածին մտրուկների նկարագրումը։

12. Ձիապահը պատասխանատվություն է կրում նրան ամրացրած ձիերի առողջ վիճակի, գիրության, մաքրության, զամբիկներին վիժումներից նախազգուշացման և մտրուկների պահպանման համար։

Նրա պարտականությունների մեջ է մտնում՝

ա). նրան ամրացրած ձիերի կերակրումը, սահմանված նորմաների և ընդունված կարգ ու կանոնի համաձայն իր ժամանակին նրանց ջրելը.

բ). ձիերի ամենորյա մաքրումը և սմբակների խնամքը.

գ). ախոռային շենքերի մաքրումը.

դ). ձիերի և ձիասարքի աշխատանքի ուղարկումը և աշխատանքից հետո հետ ընդունումը։ Ձիու կամ ձիասարքի վորևե ֆլասվածք հայտարև ելու դեպքում, պարտավոր է նա այդ մասին հայտնել ավագ ձիապահին կամ բրիգադիրին.

ե). հսկողությունը զամբիկների ցանկության հայտաբերման վրա, իր ժամանակին նրանց զուգավորման կայան տանելու և ծածկելու համար.

զ). մտրուկներին ծծից կտրելը, նրանից ախոռային ռեժիմին սովորեցնելը և նրանց խնամելը.

է). աշխատանքից ազատված հղի մայրերի ման ածելը.

թ). ֆուրաժի նախապատրաստումը կերակրման համար.

ժ). բանող մատաղ ձիերին վարժեցնելը։

Ձիերի յերամակային պահպանմամբ զբաղվող կոլտնտեսու-

թյուններում, յերամակավարները արածացնում են, նաև ջրում ձիերին, պահպանում են յերամակը գաղանների հարձակումից, գետնի սառցակալման և բքի ժամանակ ձիերին թաղցնում են բազերում ու պաշտպանված վայրում (զատիշյե) և նրանց լրացուցիչ կեր են տալիս։

13. Մուրային պահպանման ժամանակաշրջանում, գիշերը ձիերին պահպանելու, կերակրելու և հսկելու համար հատուկ ձիապահ-պահակ և առանձնացվում։

III. ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՁԱՓԵՐԸ ՑԵՎ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ

14. Ձիաբուծության մեջ աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է՝ անհատական գործարքի հիման վրա աշխորեր գրանցելով ձիերի սպասարկման, զուգավորման, ծնի պլանի կատարման, ձիերի առողջ վիճակի և գիրության համար։

Կոլտնտեսային ձիաբուծության մեջ աշխատող կոլտնտեսականների բեռնվածության նորմաները և աշխատանքի գործարքային գնահատումները մշակվում են կոլտնտեսության վարչության կողմից և հաստատվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովում։

Բեռնվածության նորմաները պետք է մատչելի լինեն յուրաքանչյուր բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականի համար և պետք է կազմված լինեն, հաշվի առնելով ձիերի, շենքերի, արոտների և այլնի գրությունը։

Վորպես որինակելի հանձնարարվում են հետևյալ բեռնվածության նորմաները.

15. Բանող ձիերին սպասարկող ձիապահին ամրացվում է վոչ ավել 10 գլխից։

16. Բանող ձիերին սպասարկելու համար ձիապահին մեկ գլխի համար որական գրանցվում է.

լավորակ խնամքի և ձիերի լավ գիրության դեպքում — 0, 12 աշխոր.

միջակ խնամքի և ձիերի միջակ գիրության դեպքում 0,09 »։

Հղիության 6-րդ ամսից հետո հղի և ծծկեր զամբիկներին խնամելու դեպքում, ձիապահին գրանցվում է՝

լավորակ խնամքի և զամբիկների լավ գիրության դեպքում 0, 17 աշխոր։

միջակ խնամքի և զամբիկների միջակ գիրության դեպքում՝ 0, 13 աշխոր՝

Յուրաքանչյուր հղիացած զամբիկի համար, ձիապահին գրանցվում է 5 աշխոր։

Բացի այդ՝ կոլտնտեսության վարչությունը մտրուկների աճեցման պլանն ապահովող ձիապահին պարգևատրում է, գրանցելով մինչև 25 աշխոր՝ յուրաքանչյուր աճեցրած մտրուկի համար։

17. Մտրուկներ խնամող ձիապահին ամրացվում է մորից զատված ժամանակից մինչև 3 տարեկան ոգտագործելի մատաղաշ վոչ ավել 12 գլխից, տոհմային մատաղաշ վոչ ավել 10 գլխից, տոհմային, մարզակայանում (տրենինգում) գտնվող վոչ ավել 6 գլխից։ Մտրուկները զատումից հետո ամրացվում են ձիապահին մինչև նրանց լրիվ աճեցումը, այսինքն մինչև 3 տարեկան դառնալը։

18. Մինչև 3 տարեկան մտրուկներին խնամելու համար ձիապահին մեկ գլխի համար որական գրանցվում է՝

լավորակ խնամքի և մտրուկի լավ գիրության դեպքում

ոգտագործելի մատաղաշի համար 0, 10 աշխոր

տոհմային » » 0, 13 »

Միջակ խնամքի և մտրուկի միջակ գիրության դեպքում

ոգտագործելի մատաղաշի համար 0, 08 աշխոր

տոհմային » » 0, 10 »

ՄԱՐԶԱԿԱՅԱՆՈՒՄ

Լավորակ խնամքի և համապատասխան գիրության դեպքում՝ 0, 22 աշխոր

19. Արտադրող հովատակներին խնամելու համար ձիապահին ամրացվում է մինչև 4 գլուխ։

20. Արտադրող հովատակներին սպասարկելու համար մեկ գլխին որական գրանցվում է՝

լավորակ խնամքի և հովատակի լավ գիրության դեպքում 0, 30 աշխոր

BIBLIOTEKA Akademii Nauk USSR

հովատակի միջակ խնամքի և միջակ գիրության
դեպքում՝ 0, 20 աշխոր։

ՁՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Լավորակ խնամքի և հովատակի լավ գիրության
դեպքում 0, 45 աշխոր
միջակ խնամքի և հովատակի միջակ գիրության
դեպքում 0, 30 աշխոր
Փոքրիչ հովատակի խնամքի համար զուգավորման
կամպանիայի ընթացքում 0, 20 աշխոր։

Յուրաքանչյուր հղիացած զամբիկի համար արտադրող հովատակներին սպասարկող ձիապահին գրանցվում է 3 աշխոր։ Արտադրող հովատակներին խնամող ձիապահը լրիվ բեռնավորում չունենալու դեպքում, նրան համապատասխան քանակությամբ մատղաշներ կամ ուրիշ ձիեր են ամրացվում։

21. Հինգ հոգուց բաղկացած յերամակավարների բրիգադին ամրացվում է 100 զամբիկ։

Յերամակավարին՝ յերամակի յուրաքանչյուր 10 ձիու համար որական գրանցվում է.—

Ձիերի լավ գիրության դեպքում 0, 10 աշխոր
Ձիերի միջակ գիրության դեպքում 0, 08 »

Բացի այդ կոլտնտեսության վարչությունը մտրուկների աճեցման պլանի կատարումն ապահովող բրիգադի յերամակավարներին պարգևատրում է՝ գրանցելով մինչև 3 աշխոր, բրիգադի աճեցրած յուրաքանչյուր մտրուկի համար։

22. Չորս հոգուց բաղկացած յերամակավարների բրիգադին ամրացվում է մինչև 100 մատղաշ ձի։

Յերամակավարին՝ մատղաշների յերամակի յուրաքանչյուր 10 գլխի համար որական գրանցվում է՝

մտրուկների լավ գիրության դեպքում 0,15 աշխոր
մտրուկների միջակ գիրության դեպքում 0,12 »

23. ՁԱՖ-ի վարիչին կամ ձիաբուծական բրիգադի բրիգադիրին, նայած նրա վորակավորմանը և ՁԱՖ-ում կամ բրիգադում յեղած ձիազլխի քանակին, որվա աշխատանքի համար 1-ից մինչև 1, 5 աշխոր է գրանցվում։

Բացի այդ, կոլտնտեսության կողմից մտրուկների աճեցման պետական պլանը կատարելու դեպքում, ՁԱՖ-ի վարիչին կամ ձիաբուծական բրիգադի բրիգադիրին տարվա վերջում՝ յուրաքանչյուր աճեցրած մտրուկի համար գրանցվում է մայրերի ախոռային պահպանման դեպքում՝ մինչև 5 աշխոր, իսկ յերամակային պահպանման դեպքում 2-ական աշխոր։

24. Ավագ ձիապանի կամ ավագ յերամակավարի աշխորները գրանցվում են ըստ սահմանված գնահատումների, նրան ամրացված ձիազլխի սպասարկման համար և բացի այդ, ձիապանների ու յերամակավարների աշխատանքի ղեկավարման համար գրանցվում է՝ նրանց վաստակած աշխորների ընդհանուր թվի 10-15 տոկոսի չափով։

25. Ձիապան-պահակի աշխորները գրանցվում են նայած սպասարկվող ձիերի թվին ու աշխատանքի վորակին՝ ձիապահի միջին վաստակի 50-ից մինչև 70 տոկոսի չափով։

26. Կոլտնտեսականին՝ աշխատանքի համար նրան ամրացրած յուրաքանչյուր զամբիկի ու բարեհաջող ծնի համար 10 աշխոր է գրանցվում և յուրաքանչյուր՝ մինչև մորից զատելը պահպանված մտրուկի համար 10 աշխոր։

27. Արտադրական (դաշտավարական կամ անասնապահական) բրիգադի բրիգադավարին՝ յուրաքանչյուր մինչև մորից զատելն աճեցրած մտրուկի համար 2 աշխոր է գրանցվում։

Մտրուկների աճեցման պլանը մինչև մորից զատելը գերակատարելու դեպքում, յուրաքանչյուր աճեցրած մտրուկի համար 4-ական աշխոր է գրանցվում։

28. Տեխնիկ ձիապանին և անասնաբուժակին՝ նայած նրանց վորակավորմանը, աշխատանքի ստաժին, սպասարկվող գլխաքանակին, յուրաքանչյուր աշխատանքի որվա համար 1-ից մինչև 1, 5 աշխորի չափով աշխոր է գրանցվում։

29. Մարգիչի (տրեների) և դարբին-պայտարի բեռնվածությունը և աշխորների գրանցման չափը սահմանվում են կոլտնտեսության վարչության կողմից և հաստատվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից։

30. Դյուղատնտեսական արտելի կանոնադրության 15-րդ կետի համապատասխան՝

Յեթե ձիաբուծական բրիգադը լավագույն աշխատանքի

հետևանքով, ապահովում է ձիերի գիրությունը և մատաղների պահպանումը, ապա արտելի վարչությունը այդպիսի բրիգադի բոլոր անդամներին յեկամուտի գրանցում և կատարում՝ նրանց վաստակած աշխորների ընդհանուր թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադում աչքի ընկնող հարվածայիններին մինչև 15 տոկոսի չափով։ Իսկ բրիգադիրին և ֆերմայի վարիչին՝ մինչև 20 տոկոսի չափով։

Յեթե ձիաբուծական բրիգադը վատ աշխատանքի հետևանքով չի ապահովում ձիերի նորմալ գիրությունը և մատաղների պահպանումը, ապա արտելի վարչությունը, այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտից ՀԱՆՈՒՄ Է կատարում՝ նրանց վաստակած աշխորների ընդհանուր թվի մինչև 10 տոկոսի չափով։

Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավլիտի տպագր՝ Ա—4111 Հրատ. № 4758
Պատվեր 784 Տիրաժ 1500.
Հանձնված է արտադրության 11 նոյեմբերի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար՝ 7 դեկտ. 1938 թ.

Գեհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴ.
Գ. Ն. Ա. ՍԱՍՈՒՐՅԱՆ ԱՆՎԱՆ

338.14
Հ-99

ՀՀ Ազգային գրադարան
NL0209887

30.675